

ները: Քարայատակին կամ կապպաթայի վրայ՝ քրիստոնեաները ի հնումն Ս. Սոփիա կամ Իմաստութիւն անուանով եկեղեցի մը կառուցած էին և որ քանդուեցաւ 614 ին: Նոյն եկեղեցին կը յիշատակուի Երուսաղէմի Breviarus ըսուած գրուածքին մէջ. վրացի Պետրոս եպիսկոպոսի կենսագիրը և Սովրոնիոս՝ Երուսաղէմի պատրիարքը անոր մասին ծանօթութիւններ տըւած են: Նոյն եկեղեցիին մէջ կը յարգուէր այն խիստ կարծր քարը, որուն վրայ, ըստ ուխտաւորաց ականգութեան, Յիսուսի ոտքերուն դրոշմը տպաւորուեցաւ, երբ Ան Պիղատոսի առջև ոտքի կեցած էր: Այդ քարը յետոյ փոխադրուած է Վերնատան եկեղեցին: ԺՖ. դարուն քրիստոնեաները դարձեալ վերականգնեցին այս եկեղեցին(*) որ ունէր երկար ատեան մը, կողմնակի երկու նակերով: Ուխտաւորներէ ոմանք տեսած են հոն նկար մը որ մեր Փրկիչը կը ներկայացնէր դատաւորին առջև: Ուրիշներ ալ տեսած էին հոն ուրիշ նկարներ՝ բայց շատերը աւերուած:

Պիղատոսի կնոջ մասին Աւետարանին մէջ կը կարդանք (Մատթ. Իէ. 19). «Եւ մինչ նստէր յատենին, առաքեաց առ նա կինն իւր և ասէ. չկայ ինչ քո եւ արդարոյն այնորիկ, զի բազում անցք անցին ընդ իս այսօր յանուրջս վասն նորա»: Աւանդութեան և Նիկոզիմոսի անյայտ աւետարաններու հնագոյն յունական թարգմանութեանց համաձայն, Պիղատոսի կնոջ անունն է Պրոկուդա՝ որ իր խորհրդաւոր երազովը Յիսուսի ի նպաստ միջամտութիւն ընել ուզած է:

(*) Այս եկեղեցին վերջին դարերուն վերածուած էր քաղաքի կառավարչին պառսօնասան. իսկ 1832 ին Իպրանիմ փառան գորանցի վերածած էր գայն: